



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ
ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016 * MURRAY HILL 6-0710

Archbishop Toros Mamogian, Primate

Քիւ 22447
Մարտ 20, 1970

Գերաշնորհ
Տ. Քարգէն Նպս. Կարժապետեան
Հովիւ Ս. Աստուածածին Հայց. Եկեղեցւոյ
եւ Նախագահ Ժիական Խորհուրդի
Ունեւորներն.

Սիրելի Սրբազան,

Ստացած ենք 1970 Փետրուար 11 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը հա-
ղորդէք թէ 2եր նախագահութեամբ՝ Յունուար 25ին գումարուած 2եր Ժիական
Ժողովին մէջ կատարուած է Ժիական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը,
եւ ներկայացնելով բուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձե-
րուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր Ժիական Ժողովը տեղի ունեցած է Թեմական Կա-
նոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Ժիական
Խորհուրդի անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել Ժիական Խորհուրդի նորընտիր Դի-
ւանի անդամոց եւ եկեղեցւոյդ ենթակայ Վարժիչներու ատենապետներու անու-
նը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով Ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր պաշ-
տօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծա-
րութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ
ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Տիարք՝ ժէք Անտոնեան
Աշոտ Գրիգորեան
Ֆիլիփ Օսիւլեան
Օհաննէս Սահակեան
Արամ Սահակեան